«Զբոսաշրջության կառավարում» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն
Զբոսաշրջությունը Հայաստանում տնտեսության գերակա ոլորտ է և տարածքային համաչափ զարգացման հիմնական ներուժային ուղղություններից մեկը: Հետևաբար, զբոսաշրջության մասնագետների պատրաստման խնդիրը ձեռք է բերում մեծ արդիականություն: «Զբոսաշրջության կառավարում» կրթական ծրագիրը նպատակաուղղված է զբոսաշրջության ոլորտում կառավարման ունակությունների ձևավորմանը: Զբոսաշրջության ոլորտի կառավարիչը մի կողմից տիրապետում է բիզնես վարչարարության և կառավարման հմտությունների, մյուս կողմից օժտված է զբոսաշրջության ոլորտի իրավական կարգավորումների խոր իմացությամբ և կառավարման տեխնոլոգիական ունակություններով: Մագիստրոսական կրթական ծրագրի հիմնական նպատակն է. զբոսաշրջության ոլորտի և/կամ դրա առանձին սուբյեկտների զարգացման գործիքակազմին տիրապետող մասնագետների պատրաստումը, որոնք ունակ կլինեն բացահայտել ներքին և արտաքին զբոսաշրջային միտումները, վեր հանել զարգացման խոչընդոտները մակրո և միկրոմակարդակներում և առաջարկել լուծումներ՝ այդ խոչընդոտների վերացման և զարգացման ուղղությամբ: Այս նպատակի իրագործման համար «Զբոսաշրջության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրում դրվել են հետևյալ խնդիրները՝ ➢ Վերլուծության, գնահատման և փոփոխություններին արձագանքման գործիքակազմի տիրապետման մասնագետների միջոցով զբոսաշրջության ոլորտի գործառնության կառուցակարգերի բարելավմանն ուղղված ծրագրերի պատրաստում: ➢ Զբոսաշրջության ոլորտի համաշխարհային, պետական և տարածաշրջանային կարգավորման կառուցակարգերի միջոցով իրականացվող քաղաքականությունների գնահատում և բարելավման հիմնավոր ուղիների առաջադրում: ➢ Զբոսաշրջության ոլորտում գործող կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունների բացահայտման միջոցով շուկայում ինքնուրույն տնտեսավարման գործունեությանը պատրաստ սուբյեկտների կրթում և ոլորտի տնտեսական միջավայրի բարելավում: ➢ Զբոսաշրջության ոլորտի, ինչպես նաև դրանում գործող կազմակերպությունների զարգացման ուղղությունների, ծրագրերի և

ռազմավարությունների մշակում և գնահատում:

- ՀՀ-ում զբոսաշրջության միջոցով տարածքային անհամաչափ զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների վերացման, զբաղվածության աճի ապահովմանն ուղղված մասնագիտական աճի ապահովում:

Աշխատանքի հնարավորություններ

Վերջին տասնամյակում տարեցտարի տարբեր ոլորտներում ավելանում է զբոսաշրջության ոլորտի ընդհանուր հմտություններին լրջագույնս և լավագույնս տիրապետող անձանց պահանջարկը, որոնք միաժամանակ ունեն տնտեսության և բիզնեսի կազմակերպման և կառավարման իմացություն: Հենց հաշվի առնելով այս հանգամանքը, մեր օրերում զբոսաշրջության կառավարումը դասվում է աշխատաշուկայում ամենապահանջված մասնագիտությունների շարքին: Զբոսաշրջության ոլորտի կառավարիչների պահանջարկը կայուն բարձր է պետական կառավարման և ՏԻՄ մարմիններում, որտեղ վերջիններս աշխատում են զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման ու իրականացման վրա: Շրջանավարտների համար աշխատանքային հնարավորություններ են ընձեռում նաև զբոսաշրջային գործակալություններն ու օպերատորները, հյուրանոցները և հյուրանոցային տնտեսության այլ օբյեկտները, սննդի և զվարճալիքների ձեռնարկությունները, զբոսաշրջիկներին սպասարկող տրանսպորտային ընկերությունները, ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններն ու միավորումները, ինչպես նաև միջազգային և այլ մասնագիտացված կազմակերպությունները՝ զբաղեցնելով մասնագիտական, միջին կամ բարձր օղակի պաշտոններ: